սան, Մասէտ, Խանքաբա և Բաղէր խանները։ Գիւղացիները հողազուրկ են. նրանք մշակում են աղաների հողերը և բերքի $^1/_3$ մասը տալիս են նրանց. մօտաւորապէս տարեկան 120 բեռ ցորեն և գարի են վճարում։

Գիւղն ունի Ս. Մկրտիչ եկեղեցին. դպրոցից զուրկ է։

Այս գիւղը հետզհետէ անտեսական ծայրայեղ քայքայման է ենթարկւում դրացի լօռեցի լաճախակի հարստահարութիւնների պատճառով։ Ահա պատկերն այն հարստահարութիւնների, որ կատարւել է 1910 թւից սկսած.

1910 թւին Սապուռ Շիրիշկանցին առնում է 40 ոչխար և 40 թուման փող։

1911-12 » Խաջէ-Շաքրօլլան 50 թուման վնաս է տալիս, տանելով գիւղացիների տան զորգերն ու իրեղէնները։ Նոյն թւին Աղա-Հուսէյին Խամսլեցին սպանում է Յակոբ Տէր Աթանասեանի որդուն — Խաչատուրին։

1913 » Սարդար-Բէյմատ լօռը գիւղ մտնելով մօտ 3000 թուման վնաս է տալիս։

1914-15 » գիւղը հարստահարութիւնից զերծ է մնում։

1916 » Հաֆլանդ Սարդար-Մահսուդը (սա Միլակերտը հարստահարող հրէշն է) 120 թուման փող է առնում։

1917 » Շաքրօլլան 40 թուման և Ղարա-Մելիքցի Մահմուդխանը 50 թուման փող են առնում։

1918 » Սուռ-Սադդան երեք անգամ գիւղը հարստահարում է—

Ա. անգամ՝	Մայիս 20-ին	առնում է	50 թուման.
Բ. »	Յունիս 1- »	»	50 »
Գ. »	» 5- »	»	10 »

Այս ողբերգական հանգամանքների վրայ աւելացնենք հողատէրերի կամայականութիւնները, որոնք այն աստիճանի սուր կերպարանք են ստացած, որ այլևս գիւղացիութիւնը հնարաւորութիւն չունի ապրելու. նրանք իրենց մահն էին ցանկանում։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	50
2	Զուններ	30
3	Միջակ	30
4	Ունեւոր	40
5	Հարուստ	—
	Ընդամենը	150